

այդ ծանաղարհով միայն ազատել նրան իր կեանքի այդ վտանգաւոր շրջանի շատ տեսակ փորձանքներից: Այս հասակումն հօր ազդեցութիւնն աւելի անհրաժեշտ էր քան առաջ. բայց գուցէ այստեղ արգէն ոչ այնքան նորա անմիջական ազդեցութիւնըն է ներգործութիւնն ունենում, որքան այն, որ ունէր նա իւր որդու վերայ նախորդ մանկական շրջանում. երբ վերջինիս բնաւորութիւնը թէև կամաց, բայց լուրջ կերպով մշակուած էր և կազմակերպուած անընդհատ՝ ամենալաւ և ազնիւ յատկութիւնների հետ շփուելով: Ինչպիսի ուրախութիւն է հօր համար և ինչպէս նա կհպարտանայ, երբ դնելով որդու յառաջադիմական քայլերը, կրտսենէ՝ որ իւր սեփական բնաւորութեան մէջ և դաժ քարութեան, աշխուժեան սաղմերը դարգացել և մեծացել են որդու սրտում և նոցա արգիւնքն է երիտասարդի աշխիւ և մաքուր կեանքը: Ես հաւատացած եմ, որ մեր բոլոր յատկութիւնները և սովորութիւնները՝ ժառանգաբար անցնելով մեր զաւակներին և մեզ հետ սննդած մշտական յարաբերութեան և անդադրաւոր նմանողութեան շնորհիւ նոցա մէջ հաստատուելով՝ անհամաժամարար աւելի աչքի ընկնող կերպով են հանդէս գալիս, քան մեր սեփական սովորութիւններն ու յատկութիւնները: Աշխատե՛ք ուրեմն մեր զաւակներին ժառանգութիւն թողնելու արնպիսի բան, որի համար ապագայում նոքա զոհ կլինեն: Այնպէս դարձնե՛ք մեր տունը, որ կարողանաք նորա մէջ հաստատել և պահպանել զգուշութեամբ բարին և լաւը, իսկ չարը՝ դուրս վանել:

Թարգմ. Востокъ Восточная ամսաթերթի 1898 փետրուար դրից:

Դ. Ղ.



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՄՊԵՂՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

(ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՆ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Ետունակութիւն) *

Բ.

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՄԷՋ.

(Բան՝ քանի:—Նրդ քանիցն:—Նրդարանք բանաւորք:—Բանք նրդոցն.—Ի քանսն՝ որ զնրմանէ:—Բան ի նմանէ):

Մի քանի բառ ըստ քմահաճոյս բացարեւոյ էմին և ապա ուրիշների հետ և պ.

Խալաթեան (սա ի հարկէ, որպէս զի յետոյ հերքէ և Խորենացու կեղծիքը ցոյց տայ), կամ Ժողովրդական ու պատմական երգեր են ուղում տեսնել այնտեղ, ուր Խորենացին այդ չէ ասում: կամ «վէպի» ընդարձակութիւնն ու ամբողջութիւնը կամ թէ, ընդհակառակն, «վէպի» արուեստականութիւնը ցոյց տալ:

Այդպիսի բառերից է քան(ք), որ մի քանի նշանակութիւն ունի. նախ իբրեւ իմաստ, խնելք, քանականութիւն, որի օրինակներ կարելի է գտնել Ա. զրքի ա. գլխի մէջ հենց. «վասն բանին... մէք պատկեր Աստուծոյ» և ին. ապա իբրեւ լեզու, օրինակ. «յեզուլ ի յոյն բան» (Ա. բ.), որ և նոյն գլխի մէջ «ի յոյն լեզու փոխարկելի փոխել» և այնուհետեւ իբրեւ խօսք, գրաւոր թէ բերանացի, այլ և ընդարձակ առմամբ ասելիք, ասած քան, որեւէ պատմութեամբ, պատմութիւն: Մեզ համար կարեւորն այս վերջին իմաստով գործածութիւնն է, որը շատ սովորական է Խորենացու մէջ. «Եղապա մերոյս յիսկզբանն յայսմ քանիցս» (=խօսք, պատմութիւն): «Հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց ոչ... հրամայեցին կարգել զյիշատակս քանից» (Ա. ա. Ժդ.): «Եղապիսիս պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս քանից»: «Զվասն նոցա կշտամբութեան յարմարել զքանս» (Ա. դ.) (խօսքեր): «Երաժս քանից»: «Ոչ բանի ինչ աստուածայնոյ եղելոյ» (Ա. դ.): «Աստուածայինքն ի ծոհ գայցեն պատմութիւնք քանից» (Ա. դ.): «Զոյգ հոգեորացն բարբառին քանից» (Ա. դ.): «Ըստ աստուածային քանից» (Ա. ե.), որ և (Դ. դ.) «Որպէս յաստուածայինսն գտանեմք աստեղալ պատմութիւնս»...: Այլում տեղոյ և ժամանակի թողեալ, հատուցուք աստանօր քանս» (Ա. դ.): «Սակաւ ինչ (Ա. դ. դ. Ժդ) անցանել քանիս»:

Նկատենք, որ հատուցուք աստանօր զքանս՝ չէ նշանակում «կտրենք այստեղ խօսքը» ինչպէս թարգմանել է Հ. Սատեփանէ, այլ «մեր խօսքը, ասելիքը ասենք»: Արդարեւ «հատուցանել» կայ մատենագիրների մէջ «հատուցանել» բայի իմաստով գործածուած, բայց «հատուցանել» բան՝ նշանակում է «խօսք տալ» (Հմմտ. Նոր Բառգ. Հայկ. լեզուի): Հմմտ. նոյն գլխի մէջ. «Զորոյ զպատմանն յետոյ

* Տես. Արարատ 1899 թ. համար Ա. եր. 30:

հատուցութեան» որ է պատճառը յետոյ կասկեք» (Ա. ի)։ «Կարի շատ լինի» թէ զամենայն՝ որ ինչ արժան է՝ ասիցեմք ի ճառիս զնախահարգելոց արանց զքանն և զգործս։ Նոյնպէս սխալ է թարգմանած հ. Սահմանեմ «գործերը և խօսքերը» որ կարող է հասկացուել վերեւում յիշած մարդկանց առած խօսքերը։ որպիսի խօսքեր ոչ մի տեղ մէջ չէ բերում Խորենացին։ Բանք կարելի է հասկանալ այստեղ համանիշ գործ բառին ինչպէս աշխարհաբար ասում ենք «բան ու գործ»։ որպիսի իմաստով ս. Դրբի Բիւզանդի և ուրիշ մատենագիրներն մէջ ևս յաճախ գործածուած կայ (Տէս նոր Բառք. Հայկ. լեզուի)։ Սակայն այստեղ «բանք» պատմութիւն է կարելի է հասկանալ և այս աւելի հաւանական է քանի որ մի տող ներքեւում յաջորդ (Ա. իա) գլխի ակզբում նոյն խնդրի մասին դառնալով «Թողլով զոչ կարեւորագոյնսն ի բանից» ասասցուք որ ինչ հարկաւորն է» քանք բառը հաւաստեալ իրրե պատմութիւն է գործածած։

«Յառասպելս դժշմարիտ քանն ... փոփոխել»։ «Հաւ առնելով առաջիկայիցս իմոց բանից»։ «Բան ճառիւր»։ «Կարգ լեալ բանից այսպիսի» (Ա. գ.)։ «Ոչ բերեւ տակ կարգ բանիս» (Ա. է.)։ «Ունի գրուն հնոց և զնախնեացն քանն (պատմութիւնները)»։ «Թորում է սկիզբն բանիցս այսպիսի» (Ա. թ)։ «Յառաջ մատուցեալ զքանքս իւր ասէ» (Ա. ժա.)։ «Անցանել սակաւութե և ընդ կարգ բանից պատեւրազմոց (Ա. ժգ.)»։ «Ոչ ինչ կամամտածական ի սմա յարմարելով քանն այլ որ ինչ ի գրոց. իսկ ըստ նմանեացն սպա և որ ինչ ի բանից արանց իմաստնոց» (Հմտ. Ա. ժթ.) «Յարմարեալ կարգելից» ... և որ ինչ վասն սոցա զրոյցք ... ոչինչ կամամտածական ... այլ որ ինչ ի գրոց։ «Այսպէս հաւաստեալ զիտասցուք զկարգ բանից» (Ա. ժթ)։ «Յարե զկարգ բանիցս զինի այսորիկ օրինակ զայս» (Ա. ի.)։ «Յառաջ քան զձեռնարկին մեր ի քանն» որ յաղագս մեծին Տիգրանայ» (Ա. իգ)։ «Եւ զինչ ինչ ի զիրս յայս արդեօք իցէ քանն սիրելի քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել» (Ա. իդ.)։

Բերած օրինակներէից շատ պարզ երևում է որ Խորենացու լեզուի մէջ քան(ք) նշա-

նակում է նախ խօսք և ապա ընդհանրապէս որ և է պատմութիւն պատմութիւն վերջին իմաստով համանիշ զրոյց և վէպ բառերին։

Ինչ է նշանակում երգ բանիցն։ Պ. Փետեր հիմնուելով քանք բառի «պատմութիւն» նշանակելու վրայ՝ «երգ բանիցն» թարգմանում է պատմական երգ։¹ Այդ թարգմանութիւնը սակայն անճիշտ է։ «Երգ բանիցն» յիշուած է միայն մի տեղ (Բ. ը.) և այն՝ յատկապէս այդպէս կոչում է Տորքի մասին առասպելաց առասպելը։ որի մէջ Խորենացու հետ և մենք ոչինչ պատմական (historique) տեսնել չենք կարող որպէս զի այդ առասպելը պատմական երգ» անուանենք միայն անոր համար որ Խորենացին «երգ բանիցն» է կոչած այդ առասպելը։ Մտածելով է որ եթէ քանք Խորենացու լեզուի մէջ նշանակում է պատմութիւն՝ այդ պատմութիւնն իր նեղ իմաստով միայն իրրե յիշատակի արժանի գործերի ու անձերի կատարուած իրողութեանց պատմութիւն միայն չէ առնում այլ ընդարձակ առումով իբրեւ ընդհանրապէս որ և է պատմութեան լինի հաւաստի պատմութիւն։ Թէ սուտ չինձու պատմութիւն մի հեքիաթ որ իւր մէջ ոչինչ պատմական կարող չէ ունենալ։ Այսպէս Ա. իր. Բանդի ասելն ոմանց անհաւաստի մարդոց ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան ի Հայկայ զթագադիր ազգի լինել Բաղրատունեաց։ Վասն որոյ ասեմ մի՛ այսպիսեաց յիմար քանից հաւանիր զի և ոչ մի շաւիղ կամ ցուցումն դոյ նմանութեան յասացեալսց՝ որ զարդարութիւն տկնարկի. զի ի քայ քանից և անո՞՞ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ»։ Այսպէս և հենց պարսից «իծուն» անձոռնի սուտ առասպելքն» կոչում են «անյարմար և անո՞՞ քանք»։ «անմիտ և անհանձար քանից յարմարանք» (Ա. զլքի յաւելուած)։ Հմտ. նոյն տեղում ... «Զատելութիւն մեր առ այսպիսի քան»։

1. Հմտ. բառ եղև իմաստով եւ հետեւեալ տեղերում. Ա. ժր. իա. իր. իգ. իե. իր. լր. Բ. ա. է. ը. ըս. լր. Ժ. «Այս է ճշմարտութեան բանիցս» առասպելի խօսքի ճշմարտութիւնը)։ Ժր. կդ. կզ. կր. հե. ճ. ճզ. ճր. դր. Գ. ա. ժե. լր. կր.։

2. Փերրեր, Հայկ. Աշխատ. եր. 129, ծան. 1.

Արդ, ինչ իմաստով որ այստեղ Պարսից առասպելների համար գործ է ածած ըսանք ըսնք բառը՝ որ երբեք «պատմութիւն» իբրեւ եղելութեանց պատմութեամբ, չէ նշանակում նոյն իմաստով գործածուած է ըսնք և Տորքի մասին երգութեամբ կամ առասպելի համար, որ և հենց պարսից առասպելների հետ համեմատուած է և նոյն կամ նման ածականներով որոշած. «Ստեմ և ես յաղագս նորա անյաջ և փցուն, որպէս պարսիկք...» քանզի կարի իմն անյարմար թուէին նմա երգ ըսնիցն»...:

Այսպէս երգ ըսնիցն նշանակում է (առասպելական) պատմութեանքների երգ, կամ մի երգ, որի մէջ որ և է բան է պատմում:

Երգարանը ըսնաւորը պ. Ֆեռաեր նոյն հիման վրայ հասկանում է նոյնպէս «պատմական երգեր»: Սակայն այդ ևս անձիշտ է: Եւ իւր ասածը հաստատելու համար ոչ մի ուրիշ հիմունք չէ բերում, բայց եթէ այն՝ որ ըսնք պատմութիւն է նշանակում: Սակայն այդ քիչ է: Բանաւոր բառը պատմական-ի իմաստով Խորենացու մէջ ոչ մի տեղ, և ոչ իսկ ուրիշ մատենագիրների մէջ, զանէ որքան բառարանները վկայում են, գործածուած մեզ յայտնի չէ: Բանաւոր այստեղ, ինչպէս սովորաբար, նշանակում է «բանական, իմացական, մտաւոր, մտացի», այսինք «բանականութեան», «իմաստութեան» վերաբերեալ, ինչպէս յաճախ գործ է ածում Եղնիկը:²

«Բանաւոր» և «բանաւորութիւն» բառերը «մտաւոր» և «իմաստութիւն» բառերի հետ միասին յաճախ կրկնում են իբրեւ համանիշ. «Վասն իմաստութեանն, բանաւորութեանն...», զկենդանական շունչն իմաստակիր մտաւորութեանն: «Հոգիք մտաւորք և բանաւորք» (Ագաթ): «Այլ ոմն իմաստասէր և բանաւոր» (Վրդ. Հց):³ «Ոչ ամենայն զնայուն կենդանութիւն մտաւոր և բանաւոր ունի» (Եղնիկ, եր. 158, 159): Խորենացին «երգարանք բանաւորք» գործ է ածած մի տեղ

միայն՝ այն զլիի մէջ (Ա. դ), ուր յատկապէս խօսում է «յաղագս անիմաստասէր քաղուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց», ուր ասում է... «Ամենցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոցն առաջնոցն առ ի յիմաստն աղամարութիւն, և անկատարութիւն ոգւոյն ըսնականի»: որովհետեւ մինչդեռ այլոց թագաւորներն իրենց ժամանակի պատմութիւնը գրել են տուել, — որով և, ինչպէս (Ա. ա.) զբում է Սահակ Բագրատունուն, պատմութիւն գրելու այդպիսի «գեղեցիկ մրտածութեամբ զխոհականութեանն վառ և բորբոք պահելով զկայծակն», զարգարել են զքանն (բանականութիւնը, հմտ. առաքինութիւն բանականին է խոհականութիւն), — իսկ մերնք հայոց պատմութիւն գրել չեն տուել. պատճառն այն չէ, զբում է Խորենացին, որ հայոց մէջ գիր ու գիրութիւն չէ եղել, «այլ ինձ թուի որպէս այժմ» և առ հինն հայաստանաց լեալ անսիրելութիւն իմաստութեան եւ երգարանաց ըսնաւորաց: Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղագս անընդհատ արանց թուլամտաց վայրենաց ճառել:

Մտածութեան այսպիսի եղանակի մէջ, — ուր մի կողմում է՝ ոգի բանական, իմաստութիւն, զարգարել զքանն, խոհականութեան, որ նոյն է, բանականութեան կայծակը վառ պահել (պատմութիւն գրել տալով), իսկ միւս կողմում է անիմաստասէր բարք, անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց, առ ի յիմաստն աղամարութիւն, անկատարութիւն ոգւոյն բանականի, անբանութիւն, թուլամտութիւն, վայրենութիւն, — «երգարանք ըսնաւորք» ասացուածի մէջ ըսնաւոր բառը երբեք «պատմական» կարող չէ նշանակել, այլ միայն ըսնական, մտացի, իմաստուն, ինչպէս սովորաբար նշանակում է, և «երգարանք բանաւորք» ոչ թէ պատմական երգեր, կամ chants traditionnels, այլ միայն chants rationnels, verständige Gesänge:

Անշուշտ անհաւանական կը թուի, որ եր-

1. Ժորժե, Հայկ. Աշխատ. եր. 129. ծան. 1:

2. Վեցնիկի սպ. եր. 97, 101, 158, 153, 170 եւրն: Անթանատ. եր. 145:

3. Տեւ Նոր Բաղդ. հայկ. լեզուի:

1. Հ. Սեփակե Խոր. պատմ. բարգւ. մեջ եր. 335. ծան. 14. յիշում է իբր այդ բառն երկու անգամ է գործածուած, երկրորդ անգամ Բ. գրի է. զլիի մէջ, ուր սակայն այդ բառը վայր:

գերի պղպղի տեսակ լինի: Սակայն բանն էլ
հենց այն է, որ «երգարանք բանաւորք» ա-
սացուածի մէջ երգերի մի առանձին տեսակ
պէտք է որունել, ինչպէս անում են, այլ
միայն պէտք է ջանալ հասկանալ, թէ ի՞նչ է
ուզում Սորենացին արտայայտել այդ բառով:
Բիշենք միայն թէ ինչպէս Սորենացին պար-
սից առասպելները «սուտ» փծուն» անձոռնի»
անցարմար և անո՞՞ք բանք» անմիտ և անհան-
ձար բանից յարմարանք»: այլ և երկու ան-
գամ «անբանութիւն» և մի անգամ «անմը-
տութիւն» է անուանում (Ա. գրքի Յաւե-
լուած) և «բարբառնութիւն» (Բ. հ.): Սե եթէ
ի նիտաի ունենանք, որ «իրանացած» հայոց
առասպելները յունական կրթութիւն ստա-
ցած Սորենացու համար, իրենց ձեռով եթէ
աւելի անիմաստ չլինէին, աւելի իմաստուն
էլ չէին լինի, և որ հենց Սորենացին Տորքի
մասին առասպելը նոյն ամականներով է կոչում
ինչ որ պարսից առասպելները. Բագրատու-
նեաց Ճաղման մասին զրոյցը «յիմար, բայ բանք
անո՞՞ք, իսկ Արծրունեաց մասին առասպելը
«բաջաղանք» (Բ. է) է կոչում— այն ժամանակ
հասկանալի կըլլին թէ «երգարանք բանաւորք»
ստեղծ ինչ է հասկանում.— Երգեր, որոնք
պարսից առասպելների պէս անձոռնի փծուն,
անհանձար (անիմաստ), անմիտ, անբան և
«անո՞՞ք» չլինէին, այլ քանաւոր, այսինքն իմաս-
տալից, մտացի, «ո՞՞քով», «պերճ» և ողորկ,
մի խօսքով ինչպէս յունաց առասպելները:

Այսպէս, փոխանակ բառի յատուկ նշան-
կութիւնը վերցնելու և ջանալու հասկանալ
հեղինակի մտքը, ի նկատի ունենալով հեղի-
նակի հայեացքն ամբողջապէս, ընդունայն տե-
ղը բառերի նոր նշանակութիւններ ևն ստեղ-
ծում, իրենց ուղած բանը պատմագրին վի-
րադրելով:

Սոյնպիսի ընդունայն բացատրութիւն է
և «երգարանք բանաւորք» «երբանացի երգա-
րաններ» թարգմանելը, ինչպէս արել է Հ.
Ստեփանէ, Հեռակելով Լմինին և մինչև ան-
գամ բնութագրել է այդ «երբանացի երգերը»
թէ «պարզ բնական և ըստ երևութին բարո-
յական երգեր էին առանց պլարանութեան»։

ԴՆՀ Հիման վրայ, Ութնդից այդ նկարագրի-
րը:

Թէ հին հայոց մէջ «երբանայի» երգեր
եղել են և ոչ թէ «անսիրելու թիւն» է եղիլ
այդպիսի երգերի, այլ ընդհակառակն, այդ
հեթանոսական երգերը նոյն իսկ շատ սիրելի
են եղել «հանապազորդեալ» և «գեղեցիկալ
մաշելով» երգուել են քրիստոնէութեան ժամա-
նակ անգամ՝ «բարբարոս խուժադուժ միտս
ունելով» (Հմմտ. Մարենացու «անբան» թու-
լամիտ վայրենի» և ին բասերը) — այդ զիտենք
Բիւզանդից, վերեւում բերած կտորի մէջ:
Նոյնը յիշում է և Սղիշէն. «Հանապազորդ
առատացոյց (Վասակ) զսոմփկան տաճարին
և յերկարէր զնուազան ուրախութեան, մո-
շելով զերկայնութիւն զիշերացն, յերգս ար-
բեցս թեան և ի կաքաւս լիտու թեան քաղցրա-
ցուցանէր ոմանց զկարգս երաժշտական և
գերգս հեթանոսականս»: ¹

«Բերանացի» երգեր լժարգմանողները մոռանում են, որ Խորենացին չէր կարող տանել թէ «բերանացի» երգեր չեն սիրել հայերը, այն էլ «հինքն հայաստանեաց», որոնց համար մի տեղ (Ա. 4) գրում է. «Առաւել յաճախացցին ... ի նուագս բամբուսն և յերգս ցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք», իսկ Ա. իգ. «Զորմէ ասէին ի հինն մեր, որք բամբուսն երգէին», և որոնց բերանացի երգերն և առասպելներն այնքան անգամ յիշում է նա, և այն՝ որ իւր ժամանակ իսկ այդ հիշմանոսական հին առասպելները կամ վիպասանք պատմին ի Գողթան», (Բ. խթ.) կամ «զոր պահնցին ակտրթելով՝ որպէս լսեմ, մարդիկ կողմանն զինաւէտ դաւառին Գողթան» (Ա. լ.), կամ թէ ինքն իւր ահանջով լսել է (Ա. լա) և այլն։

Իսկապէս Ա. Ղըքի գ. գլխի մէջ Խորե-
նացու գանդաօք ոչ թէ «բերանացի» եր-
գեր չլինելու կամ սիրած չլինելու մասին է,
այլ իմաստալից, ոչ փծուն, մի խօսքով «բա-
նաւոր» երգեր չլինելու և սիրած չլինելու
մասին և յատկապէս— մի բան որ ուշագրու-
թիւնից փախցնում են— զրա՞ծ, զրի առա՞ծ,
երգեր չլինելու մասին: Այս երեւում է թէ
այդ գլխի ընդհանուր բովանդակութիւնից և

1. *harkli. Qusuf. purqul. br. 335. 5ml. 14.*

1. Եղիշե Երր. յԿառնակ, Տփիսիս, 1879, եր. 90:

թէ «երգարանք» երգերի մատնան և ոչ թէ «երգք» բառը գործածելուց։

Բանք բառին ոմանք երգ բառի իմաստն են տալի, որպէս զի կարողանան այդպիսով եզրակացնել թէ Արայի և Շամիրամի մասին երգեր են եղել։ Այսպէս «Առ ի յոյժ ցանկականի մոլեգնութեան» ի ըսնսն՝ որ զնմանէ՝ որպէս ի տեսութիւն Համբուլեանմբ վառեալ» (Ա. Ժն) հատուածը թարգմանում է պ. Պապարեան ըստ Էմինի. «Իւր ցանկական անմասութեան մէջ Շամիրամ, ինչպէս (երգում է) նորա [Շամիրամի] մասին Երգի մէջ, վառում էր Արայի համար ցանկութեամբ»։ Այսպէս հասկանալու համար սակայն հարկաւոր էր, որ բնագրի մէջ լինէր «որպէս ի բանսն որ զնմանէ» և քանի որ որպէս բառը չկայ, ուստի և «վառէր ի բանսն որպէս ի տեսութիւն» կարող չէ նշանակել «ինչպէս երգում է Երգի մէջ»։ այն էլ Երգ զխառառով իբրեւ մի յատուկ որոշ, հանրաժանօթ երգի մէջ։ Այս հատուածն աւելի ծիշտ է հասկացել հ. Ստեփանէն, որ թարգմանել է. «Արայի մասին երգեր լսելիս այնպէս էր վառում»...։ Սոյն ձևով հասկանում է և շնորհ. Միաբան Գ. Տէր Մկրտչեան², որ իբրեւ ծանօթութիւն գնում է. «Այս կէտում գրեթէ բոլոր թարգմանիչները չեն հասկանում «բանք» բառի յատուկ նշանակութիւնը, որ է երգ»։ Սակայն սոքա ամենքն էլ ինչպէս և հենց ինքը Ծն. Միաբանը, իրենց առաջնորդ ունին Էմինին, որ «Մ. Պոքրեն. և հայոց հին վեպերը» գրուածքի մէջ (Թարգմ. եր. 12—13, 53) Արայի մասին «բանքը» նշանակում Երգի հետ այսինքն իւր երեւակայած մի ամբողջութիւն կազմող ընդարձակ Երգի հետ (ուստի և զըլխատառով երգ)։ Ամենքն էլ ոչ մի հիմունք չեն բերում թէ ինչու «բանք» պէտք է երգ կամ Երգ հասկանալ. Ծն. Միաբանը միայն իբրեւ հիմունք գրում է լոկ խօսքով պատճառարանելով թէ «Պոքրենացին անխտիր գործ է գնում «բանք» կամ «բան»։ «բանք երգոց» «երգ բանից» ասացուածները երգի իմաստով»։

առանց կոչումն անելու, սակայն թէ որտեղ է այդ «անխտիր գործածութիւնը»։

Մենք տեսնոք «բանք» և «երգ բանիցն» որտեղ և ինչ ձևով են գործածուում և ինչ են նշանակում։ Իսկ «բանք երգոցն» Պոքրենացին մի տեղ միայն (Ա. Լ.) գործածած է. «Թուեկեացն երգք... յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորա»։ Մի թէ այստեղից միայն կարելի է եզրակացնել թէ «բանք» բառի յատուկ նշանակութիւնն է երգ «բանք» այստեղ ևս իւր սովորական «խօսք» (պատմուածք) նշանակութիւնն ունի, որ և երեւում է «շարին բանք» ասացուածից, որ յօրինուածքի «շարաբանութիւնն» է ցոյց տալի. Շարաբանութիւն կարող է լինել մի երգի համար և մի ամբողջ պատմութեան համար։ Այդպէս Ա. Գ. պատմութեան համար գրում է «շարածս բանից», որ հ. Ստեփանէ «շարադրութիւններ» է թարգմանում։ Պատմութեան համար Ա. Գ. գլխի մէջ գործ է ածում և «շարագրեր» բառը իսկ Ա. գրքի երկրորդ յաւելուածի մէջ. «զորոց ամենք զբանս ... այսօր ձեռամբ իմով շարագրեմ զայնոսիկ» (= շարագրեմ, շարեմ գրանս նոցա)։ Նոյն տեղում քիչ ներքեւ. «Ժանիր զատելութիւն մեր առ այսպիսի ըսն, զի ոչ յառաջինսն մեր ասացեալ զիրս և ոչ ի վերջին բանս արժանաւորեցաք շարել» (զայն բան)։ Բաղում ինչ... պատմի ի մատենին, այլ մէք, որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է (բանք, պատմութիւն), շարեցաք» (Ա. Ժբ.)։

Արգ. «շարել բան» միեւնոյն թէ «շարագրել բան», կամ մի բառով «շարաբանել»։ Այսպէս և ... «յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ» միեւնոյն թէ «յորս շարաբանին երգք զԱրտաշիսէ», կամ բառացի ինչպէս հ. Ստեփանէն, նման Էմինի, թարգմանել է. «նոցա մէջ շարուած են Արտաշիսի և նորա որդիներին մասին եղած երգերի խօսքերը» կամ մի փոքր ազատ «նոցա մէջ շարուած են Արտաշիսի և նորա որդոց մասին երգուած պատմութիւնները»։

Բանք բառը ոչ մի տեղ Պոքրենացու մէջ «երգի» իմաստով «անխտիր» գործածուած չտեսնելով, և ոչ իսկ ուրիշ մատենագիրների մէջ, զոնէ որքան վկայում են բառարանե-

1. Халат. Арм. Эпост. եր. 137.

2. Խորեն. Պատմ. Մատեն. եր. 68.

բը, ոչ մի հիմք էլ չկեք դանում. «ի լաման» որ զնմանէ՝ հասկանալու. Արայի մասին երգեր» և ոչ թէ պատմածներ: Թէ մեր հասկացածը ճիշտ է, այդ երևում է և Ա. գրքի լազիկից, ուր «բանք» բառը, նոյն «զնմանէ» խնդրով հաւաստեալ պատմութեան և ոչ թէ երգի իմաստով է գործածած. «Հաւաստի պատմել զբուն և զառաջին Տիգրանն, և որ ինչ ի նմանէ դործք, սիրելի՛ որպէս ինձ պատմողիս ի մէջ իմոց բանիցս, որ ինչ յաղագս Նրուանգեանս Տիգրանայ բանք, եղիցի և քեզ ընթերցողիդ. որպէս այրն և գործք, այսպէս և զնմանէ ըանք»: Եւ չղիտենք թէ Շամիրամն ինչու անպատճառ Արայի մասին «երգուածը» պէտք է լսէր մոլեղին ցանկութեամբ վառուելու համար, քանի որ նա Արայի մասին պատմուածը խօսուածն էլ կամ ինչպէս հինց ժողովրդի մէջ գործ է անում ցայսօր, «բանքն» էլ կարող էր լսել և վառուել: Ուստի Շնորհ, Սիւրբանն իզուր է գրում. այդ մասին. «Թէ պէտք է նկատել, որ այս տեսակի առանց տեսնելու՝ այլ միայն գովասանական գոհունական երգեր լսելով սիրահարուիլը յատուկ է բուն ժողովրդական վէպին: Այսպէս է սիրահարուում օրինակի համար, Դաւիթը յՍանգութ յՍաթունին:— Շատ ճիշտ է, բայց և այնպէս այդանդից եզրակացնել թէ «Ռուտի և մենք կատարեալ իրաւունք ունինք հետեցնելու, որ այս գլուխը [Շամիրամի և Արայի մասին] զրուած է վիպական երգի հիման վերայ» և թէ «բանք» նշանակում է «երգ», բոլորովին սխալ և կամայական է: Եթէ գովասանական երգ լսելով միայն սիրահարուիլը

4. Zmfs. Urntuľdskunli, Uuľuľuľuľ, hr. 125.

«Մարկ», առ Կորնեծի (հայ կաթարդի մը անունն է Լորդ) պատմութիւնը քրհ. Եւ պիտի գրեմ, բարեկամս ալ մտիկ կրնես: — Կորնեծ մեր գրկցեցն անկն էր. ցօսիօ (աճառասիկ) իմեցնուն. իմոր քաջնունը (վկայք) շատ ԵՆ. վիր միտ կուգայ: ... Մըտնդ հանգ. Մըտնանանը շատ միշտ ըմբռնելի է «վկայ» քառը համանիշ «շաւի» քառի: Իսկ ժողովրդական քաջնուն մեկն է քաճաւ, փոխանակ քաճ(վ) մեռի, ինչպէս որ Եւնջն քաճն ուրիշ քառքաների մէջ: Հմեմ, պահ, պախ (=պահ), պաւ քանալի, քալանի, քալիւ (ԼԵ՝ 88), շահի, շանի, շընի Եւ Եման մեւերը, որոնց յուղական հողովի մէջ -ի իսկ - Եւ մեծ է քաջնուն քառի մէջ -ի Եւ -ի իսկական առաստանութեան պատճառով:

յատուկ է ժողովրդական վէպին, ոչ պակաս
յատուկ է անոր մէկի և լոկ գովքն առանց
երգի, մէկի մասին պատմութիւնը լսելով սի-
րահարուելը: Մեր արդի ժողովրդական վէպի
մէջ տղջիկ Խանդութը Դաւթի Պղնձի քա-
ղաքի թագաւորի տղջիկը Բաղդասարի համ-
բաւը լսելով են սիրահարուած Դաւթին,
կամ թէ, Բաղդասարին: Այսպէս և Շահ-
նամայի մէջ, որ Փիրդուսին անշուշտ ժողո-
ւրդականից է առած, զեղեցկուհի Թէհմինէն
Ռոստամի մասին պատմութիւնը լսելով սի-
րահարուած է Ռոստամին:

« Բայց շատ անգամ ես (Թեհմինե) լսել եմ
շատ շատերի բերանից

« Ինձի սխառմամբ զրոյցները քո (Ռոստամի) հրաշալի գործերից,

« Որ դու դեկը, ոչ ասիւծից, ոչ նհանդից,
 ոչ ընձից

« Զեւ զախտնումս և չի, ... »

« Բն այդ զրոյցն երբ պատմել են և ևս այդ

«Ամեն անգամ շրթունքս կծկել—հե՛նց եմ
սարսել զարմացել:

«Պարուժ էի քո այդ լանջ ու սարանոց և
բազուկներ ...»

«Այժմ ես քոնը եմ, եթէ ինձ դու կամե-
նաս քո սրտում...

« Առաջինը որ ես այսպէս քեզ շատ կարօտ եմ քաշել,

« Եւ քեզ համար խելքս զխից հանել՝ քա-
մու եմ տուել » ... »

Երկրորդ անգըր ուր «բան» երգ են թարգմանում զա Շամիրամի մահուան մասին հատուածի մէջ ասածն է. «Եւ ըսն ի նմանէ՛ Ռւլունք Շամիրամայ ի ծով» (Ա. ժը.)։ Պ. Սալաթեան² թարգմանում է (ըստ Էմինի), Пѣнь про нее ... «Եւ Երզը նորա (Շամիրամի) վրայ ... որի սխալ լինելը ուղղում է հ. Ստեփանէ, թարգմանելով. «Եւ նորանից (Շամիրամից) ասած երզը», առարկելով թէ, բնագրի մէջ «բան ի նմանէ» (ի Շամիրամայ ասացեալ) է և ոչ թէ «բան գնմանէ»,⁵ որով են

4. Ժողովի, Որոշում եւ Սահման, բարդ. Ս. Գլխ. զարկանց, Շուշի 1893, եր. 54:

2. *Халат, Арм. Эпосъ, 4r. 141.*

5. «Բան ի նմանե» ձևը կարող է և՛ մեծացրի սխալ լինել: Հմեմ. «Զնմանե քաւն ք (Ս. շա), որ հ. Սեփականե

Թագրել է տրուում թէ իրր թէ Հայաստանում կար մի երգ որ սկսուում էր այսպէս. «Ուլունք Շամիրամայ ի ծով»: Սակայն Հ. Ստեփանէն մտանում է որ «բան» բառը որ առաջին տպագրութեան մէջ «խօսք» է թարգմանել, երկրորդ տպագրութեան մէջ, անշուշտ Շիրոհ. Միաբանի անհիմն նկատողութեան ազդեցութեան տակ ² «երգ» դարձնելով, ինքն այդ նկատողութեամբ սոսկ մի բառախաղ է անում, քանի որ նորա թարգմանութեամբ էլ ենթադրուում է, թէ Շամիրամի մասին մի երգ կար, միայն ոչ ուրիշների լեզուից սասած, այլ Շամիրամի բերանը զրած:

Թէ այդպիսի երգ եղել է՝ կարելի չէ հարկաւ մակարերել «բանք» բառին ըստ քմահաճոյս տուած մի մեկնութիւնից միայն: Ուստի և «բան» բառի իմաստը պահելով, պէտք է «բան ի նմանէ» թարգմանել «նորա (սասած) խօսքը»: Եւ կարիք չկայ որ «Ուլունք Շամիրամայ ի ծով» նոյնպէս անպատճառ երգ եղած լինի կամ մի երգի առաջին տողը, ³ քանի որ զա կարող է և մի սասած «բան», մի տեսակ տառապ որ խօսք լինել, որ իրր Շամիրամ ասել է: Ոչինչ չէ ապացուցանում այն, թէ «մեռնելուց առաջ, կամ մինչև իսկ մեռնելուց յետոյ, զիւցազնի նրզը» որի մէջ ողբացում է անցեալ զօրութիւնն ու փառքը՝ շատ սովորական է ժողովրդական վէպում: ⁴ Մոռացում է, որ աւելի ևս սովորական է զիւցազնի խօսելով մեռնելը, օրինակ, Դաւիթ, Ռոստամ, Ռուբինդ խօսելով են մեռնում: Եւ մեռնող մարդոց վերջին խօսքը շատ անգամ յիշուում է յետագայում, երբ նոցա պատմութիւնն են անում: ⁵

(Երգի մասին)

Մ. Արեղեան

բարգմանում է «նորա պատմութիւնը» հմմտ. «Իրականութեանը» (Ա. մե), որ հ. Ստեփանէն բարգմանում է «նորա մասին երգը»: Ի՞նչ հետախնդրանք:

1. Խոր. պատմ. բարգմ. եր. 372. ծան. 110.

2. Խոր. պատմ. Մուսումն. եր. 71. ծան. 1:

3. Ժրգր. Հայկ. Աշխատ. եր. 123:

4. Միաբան, Խոր. Պատմ. Մուսումն. եր. 71.

5. Փ. Ստեփանի մեջ (Ե. դպր. Բ. գլ.) կարդում ենք, որ Մուշեղ Մամիկոնեանը Պարսից Շապուհ բագաւորի կանանցը, սոսկ իւր մեռնի ցերի հիմ ընկել, պատմութեանը կերպով արձակում է: Պարսից բագաւորը զարմանում է

ՀԱՅԵՐԸ

ՄԵՐԳԵՐԵՆԵԿԱՆ և ԵՇԽԵՐԸԵԳԵԿԱՆ

ՏԵՍԱԿԵՏԻՅ.

(Շարունակութիւն) *

Դրացի ազգութիւններից Հայերին իրր երբախիկեֆաշների աւելինմանում են լեռնաբանակ Հրէայք (ըստ Շանարի և Էրկերտի—85¹), ըստ Պանտիւխովի—85²) և Այսորիք (ըստ Շանարի 89³, ըստ Պանտիւխովի—87⁴), ապա Վրացիք և Լէզգիները. մինչդեռ օրինակի համար, իմերեալները, Միւղբերները, Ափսաղցիք, Աւարպատականի Թաթարները, Պարսիկները, Բրդերը—ունին ոչ այնքան լայն գլուխ (գլխի որոշիչը, միջին չափով, 83—77⁵), այլ աւելի երկարաձիգ: Սակայն, հարկ է նկատել որ գլխի ձգեալ տրամագծի կարճանալուն, կամ աւելի ծիշղը, ծոծրակի տափարակ լինելուն նպաստում է մասամբ Հայերի մօտ (և կովկասու մի քանի ուրիշ ազգութիւնների մօտ) գլխի անգիտակցական և արհեստական աճեութիւնը, որ յառաջ է գալիս երկխաներին երկար ժամանակ օրօրոցում պահելու սովորութիւնից: Երեւոյի փոքրիկ քնքոյշ, դիւրաթեք գլուխը, արդէն իւր յատուկ ծանրութեամբ, ծանրանալով օրօրոցի յատակին՝ տափականում է ծոծրակի մօտ, որ յետոյ ամբողջ կեանքում մնում է այնպէս, արտայայտելով անզուգաչափ տեք, այսինքն թեքուած գէպի աջ կամ ձախ նայելով, թէ պառկած մանկան գլուխը յաճախակի որ կողմն էր դառնում: Ծոծրակի այս կերպ տափակ լինելն ա-

յորա այս վերամեծ արարքի վրայ. «Եւ եր ի ծանանակին յայնմիկ երիվառն Մուշեղի ձերմակ մի մի. իսկ բագաւորն Պարսից ... եւ նկարել զսաշ ի պատկեր զՄուշեղ ձերմակաւ. և ի ծամ ուրախութեան իւրոյ ղեկը զսաշն առաջի իւր, և յիշէր հաճապազ զնոյն քանս ասելով՝ քե ձերմակաձիկ զինի արքի»:—Երեւակայեցիք այս պատմութեան բովանդակութիւնը նորեկացին նոյնպիսի սեղմ ոճով մեջ քերէր, ինչպիս Եսայիսի առաջնայիք և զերջացեալ այսպիս. «Եւ քան ի նմանե (սապեղալ) ձերմակաձիկ զինի արքի»: Միք «ձերմակաձիկ զինի արքի» կը լինէր մի երգ և ոչ քե մի խօսք: Այսպիս և «Ուլունք Շամիրամայ ի ծով» մի խօսք է միայն և ոչ քե երգ:

* Տես. Արարես 1899 թ. համար Ա. եր. 31: